

ԹԵՄԱ 2

Դասընթացի անվանումը՝	«Քաղաքացիական իրավունքի և դատավարության հետ առնչվող օրենսդրության վերաբերյալ ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից ընդունված որոշումները»
Տևողությունը՝	16 ակադեմիական ժամ
Ժամանակահատվածը՝	2012թ.
Անցկացման վայրը՝	ՀՀ վճռաբեկ դատարանի կոնֆերանսների դահլիճ
Մասնակիցների առավելագույն քանակը՝	25

Դասընթացը նախատեսված է առաջին ատյանի, վերաքննիչ քաղաքացիական և վարչական դատարանների, վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դատավորների, ինչպես նաև դատավորների թեկնածությունների և ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկված անձանց համար:

Դասընթացն անդրադառնում է քաղաքացիական իրավունքի և դատավարության հետ առնչվող օրենսդրության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի կողմից 2011 թվականի ընթացքում ընդունված որոշումների ներկայացմանն ու քննարկմանը:

Դասընթացը կազմակերպվելու է ըստ անհրաժեշտության:

Դասընթացը վարում են ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դատավորները: